

# ՍԻԱՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

## ՖԻԶԻԿԱ

### ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դաստարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարդի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1

Ո՞ր մեծությունն են անվանում ճանապարհ:

- 1) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող հատվածի երկարությունը:
- 2) Մարմնի շառավիղ-վեկտորի փոփոխության մոդուլը:
- 3) Հետագծի երկայնքով մարմնի անցած հեռավորությունը:
- 4) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող վեկտորը:

2

Ո՞ր մարմնի նկատմամբ է շարժվում շարժվող գնացքի վազոնում սեղանին դրված գիրքը:

- 1) Անշարժ նստած ուղևորի:
- 2) Սեղանի:
- 3) Վագոնի հատակի:
- 4) Ուղևորի:

3

Ո՞րն է արագացման միավորը՝ ըստ ՄՀ-ի հիմնական միավորների:

- 1)  $1 \text{ սմ}/\sqrt{\text{ս}}:$
- 2)  $1 \text{ մ}/\sqrt{\text{ս}}:$
- 3)  $1 \text{ մ}/\sqrt[2]{\text{ս}}:$
- 4)  $1 \text{ սմ}/\sqrt[2]{\text{ս}}:$

4

Ինչպե՞ս կփոխվեն ուղղաձիգ դեպի վեր նետված մարմնի թոիչքի առավելագույն բարձրությունը և վերելքի ժամանակը, եթե նետման արագությունը մեծացնենք 2 անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Բարձրությունը կմեծանա 2 անգամ, իսկ ժամանակը կփոքրանա 4 անգամ:
- 2) Բարձրությունը կմեծանա 4 անգամ, իսկ ժամանակը կփոքրանա 4 անգամ:
- 3) Բարձրությունը կմեծանա 2 անգամ, իսկ ժամանակը կփոքրանա 2 անգամ:
- 4) Բարձրությունը կմեծանա 4 անգամ, իսկ ժամանակը կմեծանա 2 անգամ:

5


Ինչպե՞ս է իրեն պահում մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե նրա վրա այլ մարմիններ չեն ազդում կամ դրանց ազդեցությունները համակշռված են:

- 1) Շարժվելով՝ ի վերջոն կանգ է առնում:
- 2) Միշտ շարժվում է ուղղագիծ և հավասարաչափ:
- 3) Միշտ գտնվում է դադարի վիճակում:
- 4) Կամ դադարի վիճակում է, կամ շարժվում է ուղղագիծ հավասարաչափ:

6

Նկարում պատկերված է հաշվարկման իներցիալ համակարգում ուղղագիծ շարժվող դահուկորդի արագության մոդուլի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր միջակայքում է նրա վրա ազդող ուժերի համազորի պրոյեկցիան շարժման ուղղության վրա փոքր գրոյից:

- 1) Շարժման ամբողջ ընթացքում:
- 2) Միայն 0 - 3 վ միջակայքում:
- 3) Միայն 3 - 4 վ միջակայքում:
- 4) Միայն 4 - 6 վ միջակայքում:



7

Ստորև բերված բանաձևերից ո՞րն է արտահայտում տիեզերական ձգողության օրենքը:

- 1)  $F_x = -kx$ :
- 2)  $\vec{F} = m\vec{a}$ :
- 3)  $F = \mu N$ :
- 4)  $F = G \frac{m_1 m_2}{r^2}$ :

8


Ո՞ր մեծությունն է կոչվում ուժի բազուկ:

- 1) Ուժի կիրառման կետից պտտման առանցքի հեռավորությունը:
- 2) Ուժի ազդման գծից պտտման առանցքի հեռավորությունը:
- 3) Ուժի մոդուլի և պտտման առանցքից ուժի կիրառման կետի հեռավորության արտադրյալը:
- 4) Զանգվածների կենտրոնից պտտման առանցքի հեռավորությունը:

9

Նկարում պատկերված անկշիռ ձողի վրա ազդում են  $|\vec{F}_1| > |\vec{F}_2|$  երկու ուժեր: Ո՞ր կետով անցնող, նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ ձողը կարող է գտնվել հավասարակշռության վիճակում:

- 1) Ոչ մի կետով:
- 2) a կետում:
- 3) b կետում:
- 4) c կետում:



10

Ի՞նչ միավորով է չափվում ճնշումը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Ն մ<sup>2</sup>:
- 2) 1 Ն:
- 3) 1 Ն/մ<sup>2</sup>:
- 4) 1 կգ/մ<sup>3</sup>:

11

Մարմինը լողում է հեղուկի մակերևույթին: Ո՞րն է մարմնի վրա ազդող ծանրության և արքիմեդյան ուժերի մոդուլների ճիշտ հարաբերակցությունը:

- 1)  $|m\vec{g}| + |\vec{F}_U| = 0$ :
- 2)  $|m\vec{g}| = |\vec{F}_U|$ :
- 3)  $|m\vec{g}| > |\vec{F}_U|$ :
- 4)  $|m\vec{g}| < |\vec{F}_U|$ :

12

Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:





Ազատ տատանումներ առաջանալու համար անհրաժեշտ է, որ ...

- 1) շփումը համակարգում լինի աննշան, որպեսզի տատանումներն արագորեն չմարեն:
- 2) հավասարակշռության դիրքից դուրս գալու համար համակարգն էներգիա ստանա:
- 3) հավասարակշռության դիրքից հանելիս համակարգում առաջանա դեպի հավասարակշռության դիրքն ուղղված ուժ:
- 4) հավասարակշռության դիրքից հանելիս համակարգի վրա ազդի պարբերաբար փոխսկող արտաքին ուժ:

13

Նկարում պատկերված են չորս տարրեր տատանումների գրաֆիկներ: Ո՞ր դեպքում է տատանումների հաճախությունն ավելի մեծ:

- 1) դ:
- 2) ա:
- 3) բ:
- 4) զ:




14

Նկարում պատկերված է ջրի մակերևույթին առաջացած ներդաշնակ ալիքի կողապատկերը ժամանակի որոշակի պահին: Որքա՞ն են ալիքի  $\lambda$  երկարությունը և  $x_0$  լայնույթը:

5մ

- 1)  $\lambda = 0,5 \text{ մ}$ ,  $x_0 = 2,5 \text{ մ}$ :
- 2)  $\lambda = 5 \text{ մ}$ ,  $x_0 = 1 \text{ մ}$ :
- 3)  $\lambda = 2 \text{ մ}$ ,  $x_0 = 0,5 \text{ մ}$ :
- 4)  $\lambda = 1 \text{ մ}$ ,  $x_0 = 5 \text{ մ}$ :



15

Ո՞ր մեծությունն է կոչվում հարաբերական մոլեկուլային զանգված:

- 1) Մարմնի զանգվածի և նրա մեջ պարունակվող նյութի քանակի հարաբերությունը:
- 2) Մարմնի զանգվածի և նրա մոլեկուլների թվի հարաբերությունը:
- 3) Մոլեկուլի զանգվածի և ածխածնի ատոմի ( $^{12}C$ ) զանգվածի  $1/12$  մասի հարաբերությունը:
- 4) Մեկ մոլեկուլի զանգվածը՝ արտահայտված կիլոգրամներով:

16

Իզոբերմ պրոցեսի ընթացքում իդեալական գազի ծավալը փոքրացավ 2 անգամ:  
Ինչպես փոխվեց գազի մոլեկուլների միջին քառակուսային արագությունը:

- 1) Զփոխվեց:
- 2) Մեծացավ 2 անգամ:
- 3) Փոքրացավ 2 անգամ:
- 4) Մեծացավ  $\sqrt{2}$  անգամ:

17

Ի՞նչ միավորով է չափվում մեխանիկական լարումը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Նմ:
- 2) 1 Ն/մ:
- 3)  $1 \text{ N/m}^2$ :
- 4) 1 Ն:

18

Մարմնում էլեկտրոնների թիվը  $N_e$  է, արոտոններինը՝  $N_p$ , իսկ նեյտրոններինը՝  $N_n$ :


Ո՞րն է ճիշտ պնդումը, եթե մարմինը լիցքավորված է դրականապես:

- 1)  $N_e > N_n$ :
- 2)  $N_e > N_p$ :
- 3)  $N_e < N_p$ :
- 4)  $N_e = N_p$ :

19

Ո՞ր գրաֆիկն է պատկերում կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլի կախումը լիցքից ունեցած հեռավորությունից:


- 1)  $\eta$ :
- 2)  $\omega$ :
- 3)  $p$ :
- 4)  $q$ :



20

Որքա՞ն է էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը հավասարակողմ եռանկյան  $O$  կենտրոնում, եթե յուրաքանչյուր գագաթում տեղադրված  $q$  կետային լիցքի դաշտի լարվածության մոդուլը եռանկյան կենտրոնում  $E$  է:

- 1)  $9E$ :
- 2)  $0$ :
- 3)  $E$ :
- 4)  $3E$ :



21

Ո՞րն է լիցքավորված կոնդենսատորի էներգիայի սխալ արտահայտությունը ( $C$ -ն կոնդենսատորի էլեկտրառունակությունն է,  $U$ -ն՝ լարումը,  $q$ -ն՝ լիցքը):

- 1)  $\frac{qU}{2}$ :
- 2)  $\frac{CU}{2}$ :
- 3)  $\frac{CU^2}{2}$ :
- 4)  $\frac{q^2}{2C}$ :

22


Էլեկտրաչեղոք մետաղե հաղորդչում միշտ առկա են ազատ էլեկտրոններ: Ինչո՞ւ այդ դեպքում նրա շուրջը էլեկտրական դաշտ չի նկատվում:

- 1) Էլեկտրոնների շարժումը քառսային է:
- 2) Էլեկտրոնները շատ քիչ են:
- 3) Էլեկտրաչեղոք մետաղում ազատ էլեկտրոնների և իոնների գումարային լիցքը զրոն է:
- 4) Էլեկտրական դաշտ ի հայտ չի գալիս, որովհետև հաղորդալարը պատված է մեկուսիչ թաղանթով:

23

Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1)  $\frac{5R}{3}$ :
- 2)  $4R$ :
- 3)  $R$ :
- 4)  $\frac{3R}{2}$ :



24

Ինչպե՞ս կփոխվի էլեկտրական սալիկի հզորությունը, եթե անփոփոխ լարման դեպքում նրա դիմադրությունը մեծացնենք 2 անգամ:

- 1) Չի փոխվի:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Կփոքրանա 4 անգամ:
- 4) Կմեծանա 4 անգամ:

25

Ի՞նչ է էլեկտրական հոսանքը մետաղներում:

- 1) Էլեկտրոնների և դրական իոնների ուղղորդված շարժում:
- 2) Ազատ էլեկտրոնների ուղղորդված շարժում:
- 3) Ազատ էլեկտրոնների ջերմային շարժում:
- 4) Դրական իոնների ուղղորդված շարժում:

26

Ինչո՞ւ ջերմաստիճանը բարձրացնելիս էլեկտրոլիտի հաղորդականությունը մեծանում է:

- 1) Վերամիավորման հետևանքով փոքրանում է իոնների կոնցենտրացիան:
- 2) Սեծանում է էլեկտրոլիտի խտությունը:
- 3) Աճում է դիտցման հետևանքով առաջացած իոնների կոնցենտրացիան:
- 4) Աճում է իոնների ջերմային շարժման միջին կիսումիկ էներգան:

27


Ի՞նչ միավորով է չափվում մազնիսական դաշտի հոսքը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Ֆ:
- 2) 1 Տլ:
- 3) 1 Հն:
- 4) 1 Վր:

28

Մետաղե շրջանակում մազնիսական հոսքը փոխվում է նկարում պատկերված օրինաչափությամբ: Ժամանակի ո՞ր միջակայքում է մակածվում մոդուլով ամենամեծ ԷլՇՈՒ-ն:


- 1) Բոլոր միջակայքերում ԷլՇՈՒ-ն ունի միևնույն արժեքը:
- 2) ա միջակայքում:
- 3) բ միջակայքում:
- 4) ս միջակայքում:



29

Նկարում պատկերված է կոճում հոսանքի ուժի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է իմքնանակածման ԷլՇՈւ-ն, եթե կոճի ինդուկտիվությունը 6 Հն է:

- 1) 3 Վ:
- 2) 36 Վ:
- 3) 9 Վ:
- 4) 4 Վ:



30

Իդեալական տատանողական կոնտուրի կոնդենսատորի առավելագույն լիցքը մեծացրին 3 անգամ: Ինչպես սկզբան կոճի մագնիսական դաշտի առավելագույն էներգիան:

- 1) Չփոխվեց:
- 2) Մեծացավ 3 անգամ:
- 3) Մեծացավ 6 անգամ:
- 4) Մեծացավ 9 անգամ:

31

Տրամաչորմատորի առաջնային փաթույթում լարումը 120 Վ, իսկ երկրորդային փաթույթում՝ 360 Վ: Առաջնային և երկրորդային փաթույթներում գալարների քվերի ո՞ր տարրերակն է հնարավոր:

- 1) 120, 240:
- 2) 100, 300:
- 3) 300, 100:
- 4) 360, 120:

32

Լույսի ինչպիսի՞ աղբյուրի օգնությամբ կարելի է ստանալ կիսաստվեր:

- 1) Սղբյուրի, որի չափերը շատ փոքր չեն մինչև առարկան հեռավորության համեմատությամբ:
- 2) Կետային աղբյուրի:
- 3) Բնական աղբյուրի:
- 4) Արհեստական աղբյուրի:

33

Ինչպես սկզբան կախված է ալիքի երկարությունը, եթե այն վակուումից անցնում է  $n = 2$  քելման ցուցիչ ունեցող միջավայր:

- 1) Փոփոխությունը կախված է անկման անկյունից:
- 2) Մեծանում է 2 անգամ:
- 3) Փոքրանում է 2 անգամ:
- 4) Չի փոխվում:

34

Ինչպե՞ս է կոչվում ապակե հատվածակողմով անցնելիս սպիտակ լույսի՝ տարրեր գույների տարրալուծման երևույթը:

- 1) Լույսի անդրադարձում:
- 2) Լույսի ինտերֆերենց:
- 3) Լույսի ռիֆրակցիա:
- 4) Լույսի դիսպերսիա:

35

Մասնիկի լրիվ էներգիան քանի՞ անգամ է մեծ նրա կինետիկ էներգիայից, եթե նրա արագությունը համապատասխանում է վակուումում լույսի արագության 60 %-ին:

- 1) 5:
- 2) 2:
- 3) 3:
- 4) 4:

36

Հայելային մակերևույթին ուղղահայաց ընկնող լույսը լրիվ անդրադառնում է: Որքա՞ն է այդ մակերևույթին մեկ ֆոտոնի հաղորդած իմպուլսը:

- 1)  $\frac{c}{\lambda v}$ :
- 2)  $\frac{h\nu}{2c}$ :
- 3)  $\frac{h\nu}{c}$ :
- 4)  $\frac{2h\nu}{c}$ :

37

Ինչո՞ւ Ռեզերֆորդի փորձերում  $\alpha$ -մասնիկների մեծ մասն ազատ անցնում է քիթեղի միջով՝ գործնականում չշեղվելով սկզբնական ուղղությունից:

- 1) Որովհետև  $\alpha$ -մասնիկն ունի մեծ զանգված:
- 2) Որովհետև ասումի միջուկն ունի դրական լիցք:
- 3) Որովհետև էլեկտրոններն ունեն բացասական լիցք:
- 4) Որովհետև միջուկի չափերը շատ անգամ փոքր են ասումի չափերից:

38

Որքա՞ն է ատոմի կլանած ֆոտոնի էներգիան, եթե էլեկտրոնը հիմնական  $E_1$  վիճակից անցնում է  $E_2$  գրգռված վիճակի:

- 1)  $E_1 - E_2$ :
- 2)  $E_1$ :
- 3)  $E_2$ :
- 4)  $E_2 - E_1$ :

39

Ի՞նչ մասնիկներից է կազմված ատոմի միջուկը:

- 1) Ելեկտրոններից, պրոտոններից և նեյտրոններից:
- 2) Ելեկտրոններից և նեյտրոններից:
- 3) Ելեկտրոններից և պրոտոններից:
- 4) Պրոտոններից և նեյտրոններից:

40

Ի՞նչ միջուկի է փոխակերպվում  $^{27}_{12}Mg$  -ի միջուկը մեկ  $\beta$  - տրոհման հետևանքով:

- 1)  $^{27}_{13}Al$ :
- 2)  $^{23}_{10}Ne$ :
- 3)  $^{27}_{11}Na$ :
- 4)  $^{26}_{12}Mg$ :

41

Էկրանի ինչ-որ կետում ընթացքի  $3,2 \cdot 10^{-6}$  մ տարրերությամբ երկու կոհերենտ ալիքների վերադրման հետևանքով դիտվում է չորրորդ կարգի մաքսիմում: Որքա՞ն է նույն ալիքի երկարությամբ երկու կոհերենտ ալիքների ընթացքի տարրերությունն այն դեպքում, եթե էկրանի վրա ստացվում է նույն կարգի մինիմում: Պատասխանը քազմապատկել  $10^7$ -ով:

42

Տրամվայը շարժվում է 72 կմ/ժ հաստատուն արագությամբ: Որքա՞ն ժամանակում այն կանցնի 500 մ ճանապարհ:

43

Որքա՞ն կբարձրանա ջուրը 0,25 մմ շառավիղ ունեցող մազական խողովակում: Զրի խտությունը 1000 կգ/մ<sup>3</sup> է, իսկ մակերևութային լարվածության գործակիցը՝ 0,075 Ն/մ: Ազատ անկման արագացումը 10 մ/վ<sup>2</sup> է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

44

9 ճկվ. – 2 ճկվ և 11 ճկվ լիցքեր ունեցող երեք միատեսակ մետաղե գնդիկներ հպեցին իրար և հեռացրին: Որքա՞ն կլինի գնդիկներից յուրաքանչյուրի լիցքը հեռացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել  $10^9$ -ով:

100 °C ջերմաստիճանի ջրային գոլորշին խտանալով վեր է ածվում 100 °C ջերմաստի-  
ճանի ջրի: Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:

1. Պրոցեսի ընթացքում գոլորշին շրջապատին ջերմաքանակ տվեց:
2. Ջրի վերածվելիս մոլեկուլների միջին կիմետրիկ էներգիան փոքրացավ:
3. Ջրի վերածվելիս մոլեկուլների միջին քառակուսային արագությունը փոքրացավ:
4. Ջրի վերածվելիս մոլեկուլների կոնցենտրացիան մեծացավ:
5. Մոլեկուլների փոխազդեցության պոտենցիալ էներգիան մեծացավ:
6. Ջրի վերածվելիս ներքին էներգիան փոքրացավ:

## Բ մակարդակ

- (46-47) Բալոնում 12 կգ զանգվածով գազի ճնշումը  $10^7$  Պա է: Բալոնից որոշ քանակությամբ գազ հեռացնելուց հետո գազի ճնշումը դարձավ  $5 \cdot 10^6$  Պա: Գազի ջերմաստիճանն անփոփոխ է:

46

Զանի<sup>6</sup> անգամ փոքրացավ գազի կոնցենտրացիան բալոնում:

47

Ի՞նչ զանգվածով գազ հեռացրին բալոնից:

- (48-49) 50 կգ զանգվածով բեռլ պարանի օգնությամբ հավասարաչափ արագացող շարժումով դադարի վիճակից բարձրացնում են ուղղաձիգ դեպի վեր: Այն առաջին 3 վ-ի ընթացքում անցնում է 27 մ ճանապարհ: Ազատ անկման արագացումը  $10 \text{ մ/վ}^2$  է:

48

Որքա<sup>7</sup>ն է մարմնի արագացումը:

49

Որքա<sup>7</sup>ն է պարանի լարման ուժը:

- (50-51) Դադարի վիճակում գտնվող ջրածնի ատոմը  $-3,4$  էՎ էներգիայով գրգռված վիճակից անցավ  $-13,6$  էՎ էներգիայով վիճակի: Լույսի արագությունը վակուումում  $3 \cdot 10^8$  մ/վ է:  $1 \text{ էՎ} = 1,6 \cdot 10^{-19} \text{ Ջ}$ :

50

Որքա՞ն է ատոմի ճառագայթած ֆուտոնի էներգիան՝ արտահայտված ջոռվներով: Պատասխանը բազմապատկեք  $10^{21}$ - ով:

51

Որքա՞ն է ֆուտոնի՝ ատոմին հաղորդած իմպուլսը: Պատասխանը բազմապատկեք  $10^{29}$ - ով:

- (52-53) Արտաքին շղթայի 1 Օմ դիմադրության դեպքում աղբյուրի սեղմակներում լարումը  $1,25$  Վ է, իսկ 2 Օմ դեպքում՝  $2$  Վ:

52

Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը:

53

Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն:

(54-55) Դիֆրակտային ցանցի նորմալի ուղղությամբ նրա վրա ընկնում է 2500 նմ ալիքի երկարությամբ ենթակարմիր լույս: Դիֆրակտային ցանցի 1 մմ-ի վրա պարունակվում է 200 նրբագիծ: Լույսի արագությունը վակուումում  $3 \cdot 10^8$  մ/վ է:

54

Ի՞նչ անկյան տակ կդիտվի առաջին կարգի մաքսիմումը՝ արտահայտված աստիճաններով:

55

Որքա՞ն է ալիքի տատանման հաճախությունը: Պատասխանը բազմապատկեք  $10^{-13}$ -ով:

- (56-58) 600 նմ ալիքի երկարությամբ լույսի փունջն ուղղահայաց ընկնում է հարք իդեալական հայելային մակերևույթի վրա և ազդում  $33 \cdot 10^{-9}$  Ն ուժով: Պլանկի հաստատունը  $6,6 \cdot 10^{-34}$  Ջ·Վ է:

56

Որքա՞ն է լույսի ճնշումը հայելու մակերևույթին, եթե փնջի լայնական հատույթի մակերեսը  $10^{-6}$  մ<sup>2</sup> է: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:


57

Որքա՞ն է հայելու մակերևույթին ընկնող ֆոտոնների թիվը 1 վ-ում: Պատասխանը բազմապատկել  $10^{-18}$ -ով:

58

Ինչի՞ հավասար կլինի լույսի ճնշման ուժը, եթե լույսի նույն փունջը հայելու փոխարեն ընկնի բացարձակ սև մակերևույթին: Պատասխանը բազմապատկել  $10^{10}$ -ով:

- (59-61) Գլանում գտնվող 2 մոլ իդեալական գազի հետ ընթացող պրոցեսը պատկերված է նկ. 1-ում: Գազի ջերմաստիճանը 1 և 3 վիճակներում համապատասխանաբար հավասար է 500 Կ և 2000 Կ: PV կոորդինատային համակարգի սկզբնակետը և 1 և 3 վիճակներին համապատասխանող կետերը գտնվում են նույն ուղղի վրա: 1-2 պրոցեսը իզոխոր է, 2-3 պրոցեսը՝ իզոբար: Գազային ունիվերսալ հաստատունը  $8,3 \text{ J/K}\cdot\text{mol}$  է:



59

Որքա՞ն է գազի ջերմաստիճանը 2 վիճակում:

60

Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը իզոբար ընդարձակման պրոցեսում:  
Պատասխանը բազմապատկել  $10^{-2}$ -ով:

61

Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը շրջանային պրոցեսի ընթացքում:

- (62-65) 1 կգ և 3 կգ զանգվածով փոքրիկ գնդերը կախված են միևնույն կետից՝ 0,3 մ երկարությամբ թելերով այնպես, որ գնդերը հպվում են իրար: Փոքր զանգվածով գունդը շեղում են  $60^{\circ}$  անկյան տակ և բաց բռննում՝ հաղորդելով դեպի հավասարակշռության դիրքն ուղղված և թելին ուղղահայաց 1 մ/վ արագություն: Օդի դիմադրությունն անտեսել: Ազատ անկման արագացումը  $10 \text{ m/s}^2$  է:

62

Ի՞նչ արագությամբ է օժտված փոքր զանգվածով գունդը մեծ զանգվածով գնդին բախվելու պահին:

63

Ի՞նչ արագությամբ են օժտված գնդերը բացարձակ ոչ առաձգական հարվածից անմիջապես հետո: Պատասխանը բազմապատկեք  $10$ -ով:


64

Ի՞նչ բարձրության կհասնեն գնդերը բացարձակ ոչ առաձգական հարվածից հետո: Պատասխանը բազմապատկեք  $10^4$ -ով:

65

Որքա՞ն մեխանիկական էներգիա վերածվեց ջերմության գնդերի բացարձակ ոչ առաձգական հարվածի հետևանքով: Պատասխանը բազմապատկեք  $10$ -ով:

- (66-69)  $2 \cdot 10^{-3}$  կգ զանգված,  $10^{-2}$  Կլ լիցք ունեցող գնդիկը կախված է 12,8 սմ երկարությամբ մեկուսիչ թելից՝ հորիզոնական ուղղված 0,5 Տլ ինդուկցիայով համաստեղ մագնիսական դաշտում (նկ. 2): Մագնիսական դաշտի ինդուկցիան ուղղված է դեպի դիտորդը: Թելը քեզի հետ շեղում են մինչև հորիզոնական դիրքն այն հարթության մեջ, որն ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին և բաց քողմությունն անտեսել: Ազատ անկման արագացումը  $10$  մ/վ<sup>2</sup> է:



Նկ. 2

66

Որքա՞ն է գնդիկի արագությունը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:  
Պատասխանը բազմապատկեք  $10$ - ով:

67

Որքա՞ն է գնդիկի վրա ազդող  $L$  ուժը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկեք  $10^3$ - ով:


68

Որքա՞ն է գնդիկի արագացումը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:

69

Որքա՞ն է թելի լարման ուժը, գնդիկը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:  
Պատասխանը բազմապատկեք  $10^3$ - ով:

Օղում, օպտիկական սեղանի վրա տեղադրված են երկու բարակ ոսպնյակներ, որոնց կիզակետային հեռավորությունները մոդուլով հավասար են: Ոսպնյակների գլխավոր օպտիկական առանցքներին ուղղահայաց, նրանց կիզակետային հեռավորության մոդուլին հավասար հեռավորության վրա տեղադրված է էկրանը (նկ. 3): Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:



Նկ. 3

1. Ոսպնյակները կիալ կայցնելիս, համակարգի օպտիկական ուժը հավասարվեց զրոյի:
2. I-ին ոսպնյակը ցրող է, երկրորդը՝ հավաքող:
3. Գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ տարածվող  $a$  ճառագայթը, անցնելով I-ին ոսպնյակը, ընկնում է գլխավոր օպտիկական առանցքի և էկրանի հատման F կետը:
4. Կիզակետով անցնող  $b$  ճառագայթն, անցնելով I-ին ոսպնյակը, ընկնում է էկրանի և գլխավոր օպտիկական առանցքի հատման F կետը:
5. Գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ տարածվող  $a$  ճառագայթն անցնելով II-րդ ոսպնյակը, ընկնում է էկրանի C կետը այնպես, որ նրա մտովի ետ շարունակությունն անցնում է ոսպնյակի ձախ կիզակետով:
6.  $b$  ճառագայթը, որը II-րդ ոսպնյակի բացակայության դեպքում էկրանի հետ կհատվեր գլխավոր օպտիկական առանցքի և էկրանի հատման F կետում, ոսպնյակն անցնելուց հետո ընկնում է էկրանի E կետն այնպես, որ նրա մտովի ետ շարունակությունն անցնում է ոսպնյակի ձախ կիզակետով: